29.05.2026թ.

N *Զ/1094-26*

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի
գլխավոր քարտուղար
Կ. Մարգարյանին

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Մարգարյան,

Հիմք ընդունելով ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) նախագահի մամուլի քարտուղար Մարինա Օհանջանյանի՝ 2026 թվականի մայիսի 22-ի N Զ/1039-26 զեկուցագիրը լուսանկարների տպագրման վերաբերյալ, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովման, շահագործման և արխիվի բաժնի պետ Խաչատուր Սահակյանի 2026 թվականի մայիսի 26-ի N Զ/1061-26 զեկուցագիրը դռան բռնակների և 2026 թվականի մայիսի 27-ի N Զ/1071-26 զեկուցագիրը կենցաղային ծառայությունների /նախասրահի արոմատիզացիայի ապահովման/ ձեռքբերման անրաժեշտության վերաբերյալ՝ հայտնում եմ, որ նշված գնումների համար ֆինանսական միջոցներ նախատեսված չեն: Միաժամանակ հայտնում եմ, որ ֆինանսական վերլուծության արդյունքում պարզվեց, որ Այգեձոր 67 շ. 2 տար., և 67/5 տարածքում գտնվող մասնաշենքի էներգետիկ ծառայությունների ձեռքբերման համար նախատեսված 10.0 մլն դրամից տարվա ընթացքում խնայողության արդյունքում կառաջանան ազատ միջոցներ, որից հնարավոր է համապատասխան անհրաժեշտ միջոցներ հատկացնել վերոնշված գնումների ձեռքբերումն ապահովելուն: Ուստի առաջարկում եմ ՀՀ ՀԿԿ-ՄԱԾՁԲ-ԷԷ-26/03 ծածկագրով կնքված էներգետիկ ծառայությունների մատուցման պայմանագրի գումարը նվազեցնել 217,910 դրամով:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում եմ կատարել ներքին հոդվածային վերաբաշխում.

Նվազեցնելով 217,910 դրամ «4212-Էներգետիկ ծառայություններ» հոդվածից, որից ավելացնելով 33,750 դրամը «4234-Տեղեկատվական ծառայություններ» հոդվածին, 44,160 դրամը «4267-Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածին, իսկ 140,000 դրամը՝ «4239-Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածին:

Հարգանքով՝

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի ֆինանսաբյուջետային և հաշվապահական հաշվառման բաժնի պետ-գլխավոր հաշվապահի պարտականությունները կատարող **Ա. Պոչիկյան**